ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՄԱԾՁԲ-26-12/1-1

ք. Երևան 27.04.2026թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Առաքելյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 419 638 800 (չորս հարյուր տասնինը միլիոն վեց հարյուր երեսունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին (եռամսյակներում), բայց ոչ ուշ, քան 25.12.2026թ.:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

---

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու կամ ծառայությունը չմատուցելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով: Պայմանագրով նախատեսված տույժերի հաշվարկման համար հիմք է հանդիսանում բացառապես եզրակացության մեջ կամ պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերում արտացոլված՝ ուշացած (աշխատանքային) օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է **13** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված

ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.15 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ գործերի կառավարչությունը (կառուցվածքային ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչությունը):

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ
իրավ. հասցե՝ ՀՀ ք. Երևան, Բագրատունյաց 12/73
գործ. հասցե՝ ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 7/1
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220001152069000
ՀՎՀՀ 02249552
Տնօրեն

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված N 1
N ՀՄԱՇՁԲ-26-12/1-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ*

Հ/հ	Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	**միջոցառումների հետ կապված ծառայություններ (2026 թ. մայիսի 28-ին կայանալիք զորահանդեսի կազմակերպման աշխատանքեր)**	Միջոցառումը նախատեսվում է անցկացնել Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում՝ որպես լայնամասշտաբ բացօթյա հանդիսավոր միջոցառում՝ ներառելով բեմական ներկայացում, զորահանդես և գեղարվեստական ներկայացումներ: Միջոցառման նպատակը բարձր որակի, ժամանակակից տեխնիկական և գեղարվեստական լուծումներով համալրված լայնամասշտաբ և հանդիսավոր զորահանդես իրականացնել է: Միջոցառումը տեսանկարահանվելու և եթեր է հեռարձակվելու Հանրային հեռուստաընկերությունը: Ընդհանուր հայեցակարգը մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել միջոցառման թեմատիկ առանձնահատկությունն ու խորագիրը: **Միջոցառման բովանդակային նկարագրությունը** Միջոցառման կոնցեպտը պետք է ներառի պետության խորհրդանիշներ: Ընդհանուր բեմահարթակի կառուցվածքը և ձևավորումը պետք է համապատասխանեն միջոցառման կոնցեպտին և էսքիզին: **Միջոցառման շրջանակներում օգտագործվելիք սարքերը, սարքավորումները (տեխնիկական սարքավորումները, բեմական կոնստրուկցիաները, լեդ էկրանները, գույքը և այլն) և օգտագործվող սարքերի ու սարքավորումների բնութագրիչները (պարամետրերը)** Միջոցառման շրջանակներում անհրաժեշտ է օգտագործել անհրաժեշտ քանակի և պատշաճ որակի տեխնիկական սարքեր, սարքավորումներ (LED էկրաններ, ձայնային և լուսային համակարգեր), իրականացնել տարածքի համապատասխանեցում, պատրաստում և տեղադրում, դեկոր և այլն, որոնք բավարարում են միջոցառման կազմակերպման պահանջներին: Մասնավորապես՝ նախատեսել. - տրանսլացիոն լեդ էկրանների տեղադրում՝ 3,6 մմ կետայնությամբ (ընդհանուր՝ 200 քմ.), լեդ էկրանների կառավարման համակարգ: Անհրաժեշտ է ապահովել լեդ էկրանների ուղիղ հեռարձակման համակարգ, ինչպես նաև լեդ էկրանների կոնստրուկցիաներ՝ քողարկումով, - լուսավորման դեկորատիվ համակարգ, լուսային լեդ թուբեր, - ձայնային համակարգ՝ ընդհանուր տիրույթով աշխատող բարձրախոսներ՝ նախատեսված հանդիսատեսի համար՝ 60 հատ, ցածր հաճախականությունների բարձրախոսներ՝ նախատեսված հանդիսատեսի համար՝ 96 հատ, բարձրախոսներ՝ նախատեսված բեմահարթակին մոտ գտնիներում աշխատելու համար՝ 40 հատ, բարձրախոսներ՝ նախատեսված ետնաբեմում լսելիությունն ապահովելու համար՝ 4 հատ, ձայնի թվային ղեկավարման վահանակ՝ 1 հատ, ձայնի ղեկավարման թվային վահանակի հարակից սարքեր՝ 2 հատ, հեռակառավարվող խոսափողեր՝ 8 հատ, ձայնային տեխնիկայի կոնստրուկցիաներ, աշտարակներ, քողարկումներ, - միջոցառման ժամանակ նախատեսվում է հատուկ էֆեկտների օգտագործում՝ ցերեկային եռագույն հրավառություն, - Հանրապետության հրապարակի 5 շենքերի տանիքներից յուրաքանչյուրի վրա նախատեսվում է տեղադրել 5 կարմիր, 5 կապույտ և 5 նարնջագույն հրավառություն՝ ընդհանուր 15 հատ յուրաքանչյուր տանիքի համար՝ ընդհանուր քանակը՝ 75 հատ: **Բեմ և կառուցապատում** Միջոցառման շրջանակներում անհրաժեշտ է ապահովել բեմահարթակի և հարակից տարածքների կառուցապատումը՝ ներառյալ կոնստրուկցիաները, հարթակները և տեխնիկական ենթակառուցվածքները, մասնավորապես՝ - բեմահարթակի կառուցում ծավալային կոնստրուկցիաներով և դեկորացիաներով, - հիմնական դեկորի պատվանդան՝ 300 քմ, - դեկորի արտաքին հատվածի ընդհանուր մակերես՝ 670 քմ, - բեմական ծավալային կոնստրուկցիա, որը ներառում է՝ • մետաղական խողովակ 40X40X1,5 մմ (մ)՝ 6000 մ • մետաղական խողովակ 20X20X1,5 մմ (մ) – 9000 մ • լայերների կոնստրուկցիաների վարձակալություն • լեդ լուսավորություն՝ 14,4 վատ – 1000 գծմ • ապահովիչ՝ հերմետիկ՝ 400 վատ – 50 հատ • ալյուկաբոնդ – 700 քմ • ՕՍԲ 18 մմ – 120 լիստ

		• լեդ պրոֆիլ – 1100 մ • լայնաֆորմատ բաններների տպագրություն – 1600 քմ • փայտե ձող (ռեյկա) – 1800 գծմ • պենոպլաստ – 10 խմ • օրգանական ապակի՝ 3 մմ – 70 քմ - կենտրոնական տրիբունա՝ 130 քմ, որը ներառում է՝ • մետաղական խողովակ 20X20X1,5 մմ (մ) – 2400մ • ՕՍԲ 18 մմ – 300 լիստ • կավրոլին – 400 քմ • ալյուկաբոնդ – 160 քմ • ներկ՝ լատեքս, կոդով – 30 կգ • օրգանական ապակի՝ 8 մմ – 48 լիստ - աջ եւ ձախ տրիբունա՝ յուրաքանչյուրը՝ 100 քմ, որը ներառում է՝ • մետաղական խողովակ 30X30X1,5 մմ (մ) – 2400 մ • ՕՍԲ 18 մմ – 180 լիստ • կավրոլին – 460 քմ • ալյուկաբոնդ – 160 քմ • ներկ՝ լատեքս, կոդով – 30 կգ • օրգանական ապակի՝ 8 մմ – 50 լիստ • փայտե ձող (ռեյկա) – 800 գծմ - աջ եւ ձախ էկրանների հատվածի մեծ դեկորացիաներ, ներառյալ՝ • մետաղական խողովակ 40X40X1,5 մմ (մ) – 1800 մ • լեդ լուսավորություն 7,2 վատ 400 – 500 գծմ • ապահովիչ հերմետիկ 400 վատ – 10 հատ • ալյուկաբոնդ – 330 քմ • լեդ պրոֆիլ – 320 մ • լայնաֆորմատ բաններների տպագրություն – 180 քմ • փայտյա ձող (ռեյկա) – 600 գծմ - նկարահանման համար նախատեսված հարթակների ապահովում, - պետական ներկայացուցիչների համար նախատեսված հարթակի ապահովում՝ մինչև 540 նստատեղով, - աստիճանների տեղադրում, - ետնաբեմի պատրաստում և կահավորում, - միջոցառման կառավարման կենտրոնի պատրաստում, -միջոցառման նախապատրաստական և ավարտական աշխատանքների կազմակերպում, -կառուցապատման ամբողջական անձնակազմ, - տրանսպորտ, բեռնափոխադրում, մոնտաժում և ապամոնտաժում, - նախագծման աշխատանքներ / դիզայն-ինժիներական նախագիծ, - ներգրավել համապատասխան ծանր տեխնիկա՝ կռունկներ, կառեր և ամբարձիչներ՝ կառուցապատման, մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքների իրականացման նպատակով: **Էներգետիկ և ինժեներական ապահովում** Միջոցառման տեխնիկական անխափան աշխատանքի ապահովման նպատակով անհրաժեշտ է իրականացնել էներգետիկ և ինժեներական համապատասխան միջոցառումներ, մասնավորապես՝ - միջոցառման շրջանակներում անհրաժեշտ է ապահովել էներգետիկ ծառայություն՝ միջոցառման ամբողջ տևողությամբ՝ ներառյալ մալուխները, հոսանքի բաշխիչ կայանները և հարակից տեխնիկական միջոցները - ապահովել անխափան սնուցման համակարգերի առկայությունը, իրականացնել լարանցման աշխատանքներ, ինչպես նաև գեներատորների ծրագրավորում և բեռնափոխադրում - ապահովել հոսանքի մալուխների պաշտպանությունը՝ համապատասխան ռետինե պաշտպանիչ ծածկերի միջոցով նշված աշխատանքներն իրականացվելու են Երևանի քաղաքապետարանի և ՀԷՑ-ի հետ՝ համատեղ: **Դեկորատիվ և բրենդային տարրեր**

Միջոցառման տեսողական և գեղարվեստական ամբողջականության ապահովման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ դեկորատիվ և բրենդային լուծումները՝

- «Հանրապետության օր» մեծ գրվածքի պատրաստում և տեղադրում (առնվազն 26×1.5 մ)
- ՀՀ քարտեզի ռելիեֆային դեկորի պատրաստում (առնվազն 3.5×3.5 մ)
- ՀՀ զինանշանի ռելիեֆային դեկորի պատրաստում (առնվազն 2×2 մ) ՊՎՔ
- դեկորների հետնամասի քողարկող ծածկերի ապահովում (բաներներով)
- զինանշանով ամբիոնի տեղադրում
- մետաղական դրոշակաձողերով 14 դրոշի տեղադրում՝ 2 մ բարձրությամբ (170x90 սմ)

Գեղարվեստական, մեդիա և նկարահանման ապահովում

Կատարողը պարտավորվում է ապահովել միջոցառման գեղարվեստական, մեդիա և նկարահանման իրականացումը, Հանրային հեռուստաընկերության համատեղելիությամբ, մասնավորապես՝

- միջոցառման համար նախատեսված LED էկրանների կոնտենտի ստեղծում և ադապտացում
- հաղորդավարի ետնաբեմային ձայնի ապահովում, ինչպես նաև վոյսովերների ձայնագրություն՝ համապատասխան ստուդիական պայմաններում
- միջոցառման ամբողջական ռեժիսուրայի իրականացում և ստեղծագործական ու տեխնիկական անձնակազմերի ներգրավում՝ 10-15 անձ
- լուսանկարահանման թիմի ապահովում՝ 5 կետ
- հավելյալ տեսանկարահանման թիմի ներգրավում՝ Հանրային հեռուստաընկերության նկարահանման աշխատանքներին զուգընթաց՝ ներառյալ անհրաժեշտ լրացուցիչ տեխնիկական միջոցների ապահովումը (մոտավորապես 10 լրացուցիչ տեսախցիկ)
- դրոններով նկարահանման իրականացում (3-5 հատ)
- անոնսների և անիմացիոն գլխագրերի պատրաստում՝ միջոցառման անցկացումից 5 օր առաջ
- միջոցառման ամբողջական տեսանյութի մոնտաժում (post-production)՝ 15-օրյա ժամկետում
- նկարահանման տեխնիկական անձնակազմի ապահովում՝ (առնվազն 10 անձ)

Տպագրություն և բրենդավորված նյութեր

Կատարողը պարտավորվում է ապահովել միջոցառման համար անհրաժեշտ տպագրական և բրենդավորված նյութերի պատրաստումը, մասնավորապես՝

- շապիկներ՝ տպագրությամբ (մանկական). (շապիկն արտադրվում է ուղիղ ձևվածքով, կիսաթև, 100% բամբակ կամ պոլիեսթերի խառնուրդ, կլոր վզով, վզամասը մշակված է 1-2 սմ լայնության տրիկոտաժե կամ համապատասխան մանժետով, տպագրությունը՝ DTF)՝ 100 հատ **(մինչև մայիսի 18-ը)**

- շապիկներ՝ տպագրությամբ (մեծահասակների). (շապիկն արտադրվում է ուղիղ ձևվածքով , կիսաթև 100% բամբակ կամ պոլիեսթերի խառնուրդ, կլոր վզով, վզամասը մշակված է 1-2 սմ լայնության տրիկոտաժե կամ համապատասխան մանժետով, տպագրությունը՝ DTF), 100 հատ **(մինչև մայիսի 18-ը)**

- գլխարկների պատրաստում և տպագրություն (բամբակ / պոլիեսթերի խառնուրդ, տպագրությունը՝ սուբլիմացիա կամ ասեղնագործություն), 200 հատ, **(մինչև մայիսի 18-ը)**

- փուչիկներ (լատեքսային փուչիկներ, չափը՝ ≥ 20 սմ)՝ 400 հատ

- ծրարով հրավիրատոմսերի տպագրություն (լաքապատ լամինացիա գունավոր տպագրությամբ, թուղթ՝ ≥ 200 գ)՝ 600 հատ **(մինչև մայիսի 18-ը)**

- աթոռների համարակալման սթիքերներ՝ 540 հատ

- անձնակազմի բեյջեր (10x14 սմ պլաստիկ կամ լամինացված քարտ, գունավոր տպագրությամբ)՝ 200 հատ

- պատկերասրահի կամարների բաներների տպագրություն և տեղադրում (10 կամար՝ ընդհանուր 354 քմ)

- ընդհանուր դիզայներական աշխատանքներ:

Այլ պահանջներ

Միջոցառման կազմակերպման շրջանակներում անհրաժեշտ է ապահովել նաև հետևյալ լրացուցիչ ծառայությունները՝

- միջոցառման ընթացքում ապահովել հյուրընկալների (hostess) ծառայություն՝ համապատասխան հագուստով (բարետես, իգական սեռի ներկայացուցիչ՝ առնվազն 10 հոգի)
- ջուր հյուրերի համար՝ 600 շիշ , 0,5 լիտր, տեղական արտադրության
- աթոռների պաշտպանիչ ծածկ
- անձնակազմի սնունդ (լանչ բոքս և ջուր)՝ 70 անձի համար

		- տրանսպորտային և բեռնափոխադրման ծառայություններ - բիոզուգարանների տեղադրում՝ 10 հատ - մաքրության ապահովում - տեխնիկական միջոցների անվտանգության ապահովում - բանվորական թիմի ապահովում: **Հավելում** Կատարողը պարտավոր է ներգրավել համապատասխան որակավորում, մասնագիտական փորձ և հմտություններ ունեցող մասնագետների՝ միջոցառման բոլոր փուլերի (նախագծում, կառուցապատում, տեխնիկական ապահովում, գեղարվեստական իրականացում և սպասարկում) պատշաճ և անվտանգ իրականացման նպատակով: Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքելուց հետո միջոցառման շրջանակներում անհրաժեշտ է բոլոր ծառայությունները նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: **Պայմանագրի կատարման համար պահանջվող որակավորման պահանջները** Պայմանագրի կատարման նպատակով մասնակցող կազմակերպությունը պետք է բավարարի որակավորման հետևյալ պահանջներին՝ • Մասնակցող կազմակերպությունը պետք է ունենա համապատասխան ոլորտում առնվազն 10 (տասը) տարվա գործունեության փորձ: • Մասնակցող կազմակերպությունը պետք է վերջին 5 (հինգ) տարիների ընթացքում իրականացրած լինի առնվազն 2 (երկու) լայնամասշտաբ բացօթյա միջոցառում՝ Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում: • Մասնակցող կազմակերպությունը պետք է ունենա պետական միջոցառման կազմակերպման առնվազն 1 (մեկ) պայմանագիր վերջին 1 (մեկ) տարվա ընթացքում: • Մասնակցող կազմակերպությունը պարտավոր է ներկայացնել իրականացված միջոցառումների պորտֆոլիո՝ ներառյալ լուսանկարներ և/կամ տեսանյութեր: • Մասնակցող կազմակերպությունը պարտավոր է ներկայացնել կոնցեպտուալ առաջարկի շնորհանդես, որը պետք է պարունակի միջոցառման բեմահարթակի և դեկորացիաների վիզուալ ներկայացումներ (ռենդերներ, էսքիզներ կամ համարժեք նյութեր), որոնք հնարավորություն կտան գնահատելու առաջարկվող լուծումների տեսողական իրականացումը: • Մասնակցող կազմակերպությունը պարտավոր է ներկայացնել Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված համապատասխան թույլտվությունը՝ միջոցառման կազմակերպման և անցկացման համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ԲՐՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ
Տնօրեն

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված N 1
N ՀՄԱՇՁԲ-26-12/1-1 պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չ/Հ	Ծառայության անվանումը	չ/մ	Քանակը	Մեկ միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատուցման ժամկետը
1	Միջոցառումների հետ կապված ծառայություններ այդ թվում՝	դրամ	1	419 638 800	419 638 800	2026 թ. մայիսի 28
	2026 թ.-ի մայիսի 28-ի զորահանդեսի կազմակերպման աշխատանքներ	հատ				

Հավելված N 2
N ՀՄԱՇՁԲ-26-12/1-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Չ/հ	Ծառայության անվանումը	CPV կոդը	
1	միջոցառումների հետ կապված ծառայություններ (2026 թ. մայիսի 28-ին կայանալիք զորահանդեսի կազմակերպման աշխատանքեր)	79951100/505	Նախատեսվում է ֆինանսավորել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում

Ծանոթագրություն՝

Վճարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց և համաձայնագիր կնքվելուց հետո՝ փուլային տարբերակով՝ պատվիրատուի և կատարողի միջև համապատասխան հանձման-ընդունման արձանագրության ակտը և փոստաթղթերը ստորագրելուց հետո:

• Առաջին փուլի վճարում՝ 25 %. կոնցեպտի վերջնականացման, անոնսների, LED կոնտենտների և անիմացիոն գլխագրերի պատրաստման, ինչպես նաև նախագծման, նախապատրաստական աշխատանքների իրականացման և տեխնիկական սարքավորումների ու տպագրական նյութերի նախնական պատվիրումների ապահովման ժամանակ:

• Երկրորդ փուլի վճարում՝ 45 %. միջոցառման տեխնիկական ենթակառուցվածքների մոնտաժի և հիմնական աշխատանքների իրականացման փուլում, մայիսի 21-ին նախատեսված առաջին փորձի համար:

• Երրորդ փուլի վճարում՝ 30 %. միջոցառման իրականացումից և ծառայությունների մատուցման պարտավորությունների ամբողջական կատարումից հետո՝ որպես վերջնական վճարում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Գ. ԱՐՈՒՍՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ
Տնօրեն

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված N 3
N ՀՄԱԾՁԲ-26-12/1-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՀՄԱՀՁԲ-26-12/1-1 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
N ՀՄԱՀՁԲ-26-12/1-1 պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.